ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2.

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի խորհրդի նիստի

25-ը սեպտեմբերի 2017թ.

Նախագահ Մ. Ա. Զաքարյան

Քարտուղար Հ. Ս. Գասպարյան

Ներկա էին խորհրդի անդամները:

ՕՐԱԿԱՐԳ

1. *2016-17թթ. ուստարվա II կիսամյակի լուծարքային շրջանի ամփոփում:*
   /զեկ. Մ. Ա. Զաքարյան/
2. *2017-18թթ. ուս. տարվա I կիսամյակի I ընթացիկ ստուգումների և ընթացիկ քննությունների գրաֆիկի հաստատում:*
   /զեկ. Մ. Ա. Զաքարյան/
3. *Կրթական ծրագրերի վերանայում:*
   /զեկ. Մ. Ա. Զաքարյան/
4. *2017-18թթ. ուս. տարվա ամփոփիչ քննությունների հարցաշարերի, ավարտական և կուրսային աշխատանքների թեմաների հաստատում:*
   /զեկ. Մ. Ա. Զաքարյան/
5. *Այլ հարցեր:*

ԼՍԵՑԻՆ-Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց ֆակուլտետի դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում է Մ. Ա. Զաքարյանը:

Օրակարգի առաջին հարցի մասին հանդես եկավ Մ. Ա. Զաքարյանը:

Նա ներկայացրեց 2016-17ուստարվա II կիսամյակի լուծարքային շրջանի արդյունքները. ըստ որի ,,Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա,, II կուրսի վճարովի ուսուցման համակարգի մեկ ուսանող մեկ ակադեմիական

պարտք: Մնացած մասնագիտությունների գծով ակադեմիական պարտքեր չեն գրանցվել:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա. Վ. Ցուցուլյանը, Ա. Ս. Սիմոնյանը և ուրիշներ:

Օրակարգի երկրորդ հարցի մասին խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը ներկայացրեց 2017-18ուստարվա ընթացիկ քննությունների ստուգումների ժամանակացույցը, որը կազմվել է ըստ ուսումնական պլանի:

Հաստատման մասին եղավ ընդհանուր առաջարկ:

ՈՐՈՇԵՑԻՆ-Ներկայացնել ուսումնամեթոդական վարչություն հաստատելու ընթացիկ քննությունների և ստուգումների ժամանակացույցը:

Օրակարգի երրորդ հարցի հետ կապված Մ. Ա. Զաքարյանը ներկայացրեց կրթական ծրագրերի կազմման և ներկայացման ամփոփ տվյալները. ըստ մասնագիտությունների կրթական ծրագրերը առկա են:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Կ. Հ. Հովսեփյանը, Ա. Ս. Հովակիմյանը: Ներկայացվածի մասին նրանք ևս համակարծիք էին, ընդգծելով՝ կրթական ծրագրերի կիրառման կարևորությունը:

Օրակարգի չորրորդ հարցի մասին ֆակուլտետի գիտխորհրդի նախագահը ըստ ամբիոնների ներկայացրեց ուսումնական պլանով նախատեսված, նախապես կազմված և քննարկված ավարտական և կուրսային աշխատանքների թեմաները:

Թեմաները ղեկավարների կողմից կազմվել են անցած դասընթացների /տեսական, գործնական և լաբորատոր/ հիման վրա: Այնուհետև ներկայացրեց ամփոփիչ ատեստավորման հարցաշարերը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- «Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության» ամբիոնի վարիչի ժ/պ Ա. Վ. Ցուցուլյանը: Նա համակարծիք էր ներկայացված նյութին և

առաջարկեց հաստատել. ներկայացրեց նաև ավարտական և կուրսային աշխատանքների ղեկավարների և ուսանողների աշխատակարգի ժամանակացույցը:

Այնուհետև հանդես եկավ «Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլագիաների» ամբիոնի վարիչի ժ/պ Ա. Ս. Հովակիմյանը: Նա ևս հանդես եկավ ավարտական և կուրսային աշխատանքների թեմաների և աշխատակարգի հաստատման վերաբերյալ առաջարկություններով և առաջարկեց հաստատել:

ՈՐՈՇԵՑԻՆ-

1. Հաստատել ավարտական աշխատանքների թեմաները:
2. Հաստատել կուրսային աշխատանքների թեմաները:
3. Հաստատել ամփոփիչ ատեստավորման հարցաշարերը:
4. Հաստատել կուրսային աշխատանքների կոնսուլտացիաների ժամանակացույցը:
5. Հանձնարարել ամբիոններին վերահսկել ավարտական և կուրսային աշխատանքների ղեկավարների և ուսանողների աշխատակարգը:

Օրակարգի հինգերորդ հարցի մասին ֆակուլտետի խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը ներկայացրեց, որ ,,Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության,, ամբիոնի ասիստենտ Ալեքսան Շամիլի Մարգարյանը և ,,Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների,, ասիստենտ Աննա Սմբատի Սիմոնյանը հավակնում են դոցենտի պաշտոնում: ՈՒստի ներկայացվում են մասնաճյուղի գիտխորհրդին հաստատելու նիստի որոշումը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Ներկայացնել մասնաճյուղի գիտխորհրդին ,,Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության,, ամբիոնի ասիստենտ Ալեքսան Շամիլի

Մարգարյանին և ,,Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների,, ասիստենտ Աննա Սմբատի Սիմոնյանին հաստատելու դոցենտի պաշտոնում:

ՆԱԽԱԳԱՀ	Մ. Ա. ԶԱՔԱՐՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ	Հ. Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ